# Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

**1. Ֆիզիկական անձ**

1.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);
1.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ;
1.3. Հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում);
1.4. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**2. Մինչև 14 տարեկան անչափահաս ֆիզիկական անձ**

2.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր /կնքված ծնողների, որդեգրողների կամ խնամակալների կողմից/ (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);
2.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների (ծնողների, որդեգրողների կամ խնամակալների) անձը հաստատող փաստաթղթեր (այդ թվում նաև՝ անչափահաս անձի ծննդյան վկայական);
2.3. Անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում);
2.4. Անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**3. 14-18 տարեկան անչափահաս ֆիզիկական անձ**

3.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);ՀՀ օրենսդրությամբ սահմանված անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների անձը հաստատող փաստաթղթեր, այդ թվում նաև՝ անչափահասի ծննդյան վկայական;
3.2. Անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում);
3.3. Անչափահաս անձի օրինական ներկայացուցիչների (ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի) գրավոր համաձայնություն հաշվի բացման և դրանով գործարքներ կատարելու վերաբերյալ;
3.4. Անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**4. Անհատ ձեռնարկատեր, ՀՀ օրենսդրության համաձայն ՀՎՀՀ ունեցող ֆիզիկական անձ և Նոտար**

4.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);
4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ;
4.3. Հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում);
4.4. Պետական հաշվառումը հավաստող՝ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածք;
4.5. Բանկի հետ գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշի և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;
4.6. Ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված և բնօրինակ լիազորագիր /լիազորագրի բնօրինակը պահվում է Բանկում/;
4.7. Նոտարի դեպքում՝ նոտարի ծառայողական վկայական և/կամ նշանակման հրաման;
4.8. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող

ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**5. Ռեզիդենտ իրավաբանական անձ**

5.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);

5.2. Իրավաբանական անձի կանոնադրություն՝ բոլոր փոփոխություններով;

5.3. Իրավաբանական անձի պետական գրանցումը հավաստող՝ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածք;

5.4. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, Բանկի հետ գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների և Իրավաբանական անձի կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;

5.5. Ստորագրությունների նմուշների և կնիքի (կնիք ունենալու դեպքում) դրոշմի քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված բնօրինակ լիազորագրեր /լիազորագրի բնօրինակը պահվում է Բանկում/;

5.6. Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք ռեեստից ընկերության բաժնետերերի վերաբերյալ:

5.7. 10% և ավել բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող մասնակցի (բաժնետիրոջ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի պատճեն՝ ֆիզիկական անձանց դեպքում, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ կանոնադրության պատճեն, պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքը , հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող փաստաթղթի պատճեն և տեղեկանք ընկերության մասնակիցների (բաժնետերերի) վերաբերյալ: Օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) Իրավաբանական անձի դեպքում նաև այդ իրավաբանական անձի (իրական շահառուների) եկամուտների և ունեցվածքի աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր:

5.8. Օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) Իրավաբանական անձի դեպքում նաև այդ իրավաբանական անձի (իրական շահառուների) եկամուտների և ունեցվածքի աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր;

5.9. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**6. Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում (մասնաճյուղ, ներկայացուցչություն), հիմնարկ**

**(այսուհետ՝ Առանձնացված ստորաբաժանում)**

6.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);

6.2. Հիմնադրի կանոնադրություն՝ բոլոր փոփոխություններով;

6.3. Հիմնադրի պետական գրանցման միասնական գրանցամատյանից տրվող քաղվածք;

6.4. Հիմնադրի հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող փաստաթղթի պատճեն (չի պահանջվում այն դեպքում, երբ հարկ վճարողի հաշվառման համարը ներառված է պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքում);

6.5. Հիմնադրի իրավասու մարմնի որոշում Առանձնացված ստորաբաժանման ստեղծման, դրա կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև Առանձնացված ստորաբաժանման ղեկավար նշանակելու վերաբերյալ;

6.6. Հիմնադրի կողմից Առանձնացված ստորաբաժանման ղեկավարին տրված լիազորագրի բնօրինակը;

6.7. Առանձնացված ստորաբաժանման կանոնադրություն՝ իր բոլոր փոփոխություններով;

6.8. Առանձնացված ստորաբաժանման հաշվառումը հավաստող՝ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածք;

6.9. Առանձնացված ստորաբաժանման գործադիր մարմնի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, Բանկի հետ ֆինանսական գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների և Առանձնացված ստորաբաժանման կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;

6.10. Ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված լիազորագրերի բնօրինակները /լիազորագրի բնօրինակը պահվում է Բանկում/:;

6.11. Օտարերկրյա պետություններում ստեղված իրավաբանական անձանց՝ ՀՀ տարածքում ստեղծված Առանձնացված ստորաբաժանումների համար նաև Առանձնացված ստորաբաժանման հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող փաստաթուղթ (չի պահանջվում այն դեպքում, երբ հարկ վճարողի հաշվառման համարը ներառված է պետական գրանցման/հաշվառման վկայականում կամ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքում); Օտարերկրյա իրավաբանական անձանց՝ ՀՀ տարածքում ստեղծված Առանձնացված ստորաբաժանումների համար պահանջվում են 6.1 կետից մինչև 6.10 կետում նշված բոլոր փաստաթղթերը ապոստիլով և նոտարական կարգով հաստատված:

6.12. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**7. Հիմնադրամ, հասարակական կազմակերպություն, ասոցիացիա**

7.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);
7.2. Կանոնադրություն՝ բոլոր փոփոխություններով;
7.3. Պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքի պատճեն;
7.4. Հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող փաստաթղթի պատճեն (չի պահանջվում այն դեպքում, երբ հարկ վճարողի հաշվառման համարը ներառված է պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքում);
7.5. Գործադիր մարմնի ղեկավարի (կառավարիչ կամ տնօրեն կամ գործադիր տնօրեն կամ գլխավոր տնօրեն կամ ռեկտոր), գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, Բանկի հետ գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;
7.6. Ստորագրությունների նմուշների և կնիքի (կնիք ունենալու դեպքում) դրոշմի քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված լիազորագրեր;
7.7. Հիմնադրման մասին որոշում;
7.8. Կառավարման մարմինների /հոգաբարձուների խորհրդի/ կազմում ներառված անձանց անձը հաստատող փաստաթղթեր;
7.9. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**8. Պետական (համայնքային) կառավարչական հիմնարկ, ՊՈԱԿ**

8.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);
8.2. Կանոնադրություն՝ բոլոր փոփոխություններով;
8.3. Պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքի պատճեն;
8.4. Հիմնադրի իրավասու մարմնի որոշում ստեղծման, դրա կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև ղեկավար նշանակելու վերաբերյալ;
8.5. Կանոնադրությամբ սահմանված դեպքերում հիմնադրի կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնություն հաշիվ բացելու վերաբերյալ;

8.6. Գործադիր մարմնի ղեկավարի /համայնքի ղեկավարի/, գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, Բանկի հետ գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;

8.7. Ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված լիազորագրերի բնօրինակները /լիազորագրի բնօրինակը պահպանվում է Բանկում/;

8.8. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**9. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ**

9.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);

9.2. Իրավաբանական անձի կանոնադրություն ` բոլոր փոփոխություններով;

9.3. Իրավաբանական անձի գրանցման վերաբերյալ փաստաթուղթ՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից,

9.4. Հարկ վճարողի հաշվառման համարը հաստատող փաստաթուղթ (չի պահանջվում այն դեպքում, երբ հարկ վճարողի հաշվառման համարը ներառված է պետական գրանցման վկայականում կամ պետական միասնական գրանցամատյանից տրվող քաղվածքում);

9.5. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, Բանկի հետ գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների և Իրավաբանական անձի կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտ;

9.6. Ստորագրությունների նմուշների և կնիքի դրոշմի (կնիք ունենալու դեպքում) քարտում նշված անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի դեպքում), վերջիններիս պաշտոնը հավաստող փաստաթղթեր և/կամ պատշաճ վավերացված լիազորագրեր;

9.7. Տվյալ օտարերկրյա պետության ռեեստրի կողմից ապոստիլով հաստատված քաղվածք, որը պարունակում է թարմ ամսաթվով

(առավելագույնը 15 օր) տեղեկություններ ընկերության մասնակիցների, ընկերության գրանցված լինելու և ընկերության գործադիր մարմնի և այլ պաշտոնատար անձանց (առկայության դեպքում) վերաբերյալ:

9.8. 10 (տասը) և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող անձանց և իրական շահառուների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (ֆիզիկական անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ, իրավաբանական անձանց՝ կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և գրանցման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ) պատճեններ;

9.9. Օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) Իրավաբանական անձի դեպքում նաև այդ իրավաբանական անձի (իրական շահառուների) եկամուտների և ունեցվածքի աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր;

9.10. Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (ՕՀՀՀԱ) կարգավիճակի վերաբերյալ պահանջվող ձևաթուղթ (եթե կիրառելի է «Ինեկոբանկ» ՓԲԸ FATCA պահանջների ապահովման ընթացակարգի համաձայն):

**10. Հայաստանում օտարերկրյա պետության դեսպանություն և հյուպատոսություն**

10.1. Հաշվի բացման դիմում/պայմանագիր (Բանկի կողմից հաստատված տիպային ձևով);

10.2. ՀՀ-ում հավատարմագրված լինելու վերաբերյալ փաստաթուղթ;

10.3. Օտարերկրյա պետության և/կամ հյուպատոսության կանոնադրություն՝ բոլոր փոփոխություններով:

10.4. Դեսպանի կամ հյուպատոսի նշանակման վերաբերյալ իրավասու մարմնի որոշում;

10.5. Դեսպանի կամ հյուպատոսի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձի,):

- **Փաստաթղթերին ներկայացվող այլ պահանջներ**

1) Բանկ են ներկայացվում նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակները կամ բնօրինակի պատճենը՝ հաստատված

նոտարական կարգով, բացառությամբ սույն փաստաթղթով սահմանված դեպքերի: Օտարերկրյա պետությունում տրված փաստաթղթի բնօրինակի պատճենը պետք է հաստատված լինի օտարերկրյա նոտարի կողմից, ինչպես նաև օրինականացված տվյալ պետության դիվանագիտական կամ հյուպատոսական համապատասխան մարմնի կողմից /հաստատված ապոստիլով/: «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961թ.-ի հոկտեմբերի 05-ի Հաագայի կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) միացած պետություններում տրված փաստաթղթի բնօրինակի պատճենը պետք է վավերացված լինի տվյալ պետության նոտարի կողմից և իր վրա պետք է կրի համապատասխան լիազոր մարմնի կողմից զետեղված՝ Կոնվենցիայով նախատեսված ապոստիլ (այսուհետ՝ Ապոստիլ) (Կոնվենցիային միացած պետությունների ցանկին ծանոթացեք հետևյալ հղմամբ՝ http://www.hcch.net/index_en.php?act=conventions.status&cid=41): ԱՊՀ անդամ պետություններում, ինչպես նաև այն պետություններում, որոնց հետ ՀՀ կնքել է համապատասխան միջազգային պայմանագիր (ինպիսիք են օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան, Լիտվան) տրված փաստաթղթի բնօրինակի պատճենը կարող է միայն վավերացված լինել տվյալ պետության նոտարի կողմից, առանց դիվանագիտական և հյուպատոսական մարմինների կողմից լրացուցիչ օրինականացման և առանց իր վրա Ապոստիլ կրելու: Փաստաթղթերի բնօրինակները պատճենահանվում և պահպանվում են Բանկի աշխատակցի կողմից, իսկ բնօրինակի հաստատված պատճենը մնում է Բանկում:

2) Բացի ռուսերեն և անգլերեն լեզուներից այլ օտար լեզվով կազմված փաստաթուղթը պետք է թարգմանված լինի հայերեն լեզվով, իսկ թարգմանության իսկությունը վավերացված՝ ՀՀ նոտարի կողմից:
3) Կազմակերպության կնիքի դրոշմն արտատպվում է սպասարկող աշխատակցի ներկայությամբ;
4) ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝
   - ✓ ՀՀ քաղաքացիների համար՝ անձնագիր (ներառյալ կենսաչափական անձնագիր), նույնականացման քարտ, զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար,ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր, ծննդյան վկայական;
   - ✓ փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ;
   - ✓ ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական;
   - ✓ օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև Հ-Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ,

ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր: Այն դեպքում, երբ օտարերկրացին ՀՀ միջազգային պայմանագրի հիման վրա ՀՀ պետական սահմանը հատել է ճամփորդության համար չնախատեսված, սակայն օտարերկրյա պետությունում վավեր անձնագրով (ներքին անձնագիր), ապա ՀՀ տարածքում վերջինիս անձը հաստատող փաստաթուղթ է համարվում նաև ներքին անձնագիր;

- ✓ քաղաքացիություն չունեցող անձանց համար` օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ, Հ-Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական, Հ-Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր` մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր;
- ✓ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար` ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):